



ԳԱԼՈՒՍ ԿԻԼՊԵՆԿԵԱՆ ՀԻՄՆԱՐԿՈՒԹԻՒՆ  
ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒ ԲԱԺԱՆՍՈՒՆՔ

ՀԱՄԱԼՍԱՐԱՆԱԿԱՆ ԿՐԹԱՆՊԱՍՏՆԵՐ

## 2023-Ի ԶԵԿՈՅՑ

### ՆԵՐԱԾԱԿԱՆ

1956 թուականին սկսեալ աշխարհասփիւռ հայ եւ հայագիտական ոլորտի ուսանողներու համալսարանական կրթաթոշակներ տրամադրելը եղած է Հայկական Համայնքներու Բաժանմունքի հիմնական գործունէութիւններէն մէկը:

2023-ի արդիւնքները կը վերաբերին հետեւեալ հինգ կրթանպաստի ծրագիրներուն՝

1. [Հայագիտութեան կրթանպաստներ](#)
2. [Հայագիտութեան կարճաժամկէտ հետազօտական դրամաշնորհներ](#)
3. [Կարճաժամկէտ գիտաժողովներու եւ ճամփորդական դրամաշնորհներ Հայաստանի ուսանողներուն համար](#)
4. [Բարձրագոյն կրթութեան նպաստ զարգացող երկիրներու հայ ուսանողներուն համար](#)
5. [Փորթուկալի մէջ հայ համալսարանականներու կրթանպաստներ](#)

### ՆԱԽԱՀԱՇԻՒԻ ՅԱՏԿԱՑՈՒՄ

#### 1. [Հայագիտութեան կրթանպաստներ](#)

Կրթանպաստի այս ծրագիրը բաց է Հայագիտութեան մէջ մասնագիտացող ուսանողներու եւ հետազօտողներու, որոնք Master's, PhD, կամ Post Doc-ի կը հետեւին ճանչցուած որեւէ համալսարանի մէջ:

2023-ին, Բաժանմունքը նախապատուութիւն տուաւ ժամանակակից հիմնահարցերու վերաբերեալ հետազօտութիւններու: Բաժանմունքը ստացաւ 51 դիմում եւ յատկացուց 14 կրթանպաստ՝ Հայաստանէն, Լիբանանէն, Յունաստանէն եւ Միացեալ Նահանգներէն ուսանողներու: Կրթանպաստները տարեկան 7,000-էն 25,000-ի միջեւ էին (յատկացուած առաւելագոյնը երեք տարուան համար): Նախորդող տարիներէն 13 կրթաթոշակ նորոգուեցաւ:

Հետեւեալ աղիւսակը կը ներկայացնէ Հայագիտութեան յատկացուած կրթաթոշակներու 2023-ի ընդհանուր պատկերը

Հայագիտութեան կրթանպաստներ	Յատկացում (Եւրօ)	Քանակ
Նոր կրթանպաստներ	200,000	14
Նորոգուած կրթանպաստներ	208,850	13
<b>ԸՆԴԱՄԵՆԸ</b>	<b>408,850</b>	<b>27</b>

## 2. Հայագիտութեան կարճաժամկէտ հետազոտական դրամաշնորհներ

Կրթանպաստի այս ծրագիրը հայագիտութեան ոլորտին մէջ աշխատող, ակադեմականներու, հետազոտողներու եւ ուսանողներու (Հայաստանէն դուրս) առիթը կընծայէ մասնակցելու գիտաժողովներու, սեմինարներու, հետազոտական ճամբորդութիւններ կատարելու եւ աւելին:

2023-ին, Բաժանմունքը ստացաւ 105 դիմում եւ 49 նպաստ յատկացուց. չորսը արեւմտահայերէնի ամառնային խտացեալ դասընթացքներուն հետեւելու համար (Արեւմտահայագիտական ուսման կեդրոն), եօթը Լիզպոնի համալսարանի հայերէնի դասընթացքներուն հետեւելու համար (ILNOVA):

Հետեւեալ աղիւսակը կը ներկայացնէ 2023-ին յատկացուած «Հայագիտութեան համար կարճաժամկէտ հետազոտական դրամաշնորհներ»-ու ընդհանուր պատկերը

Հայագիտութեան համար կարճաժամկէտ հետազոտական դրամաշնորհներ	Յատկացում (Եւրօ)	Քանակ
Հայագիտութեան կարճաժամկէտ դրամաշնորհներ	113,032	38
Արեւմտահայագիտական ուսման կեդրոնի դասընթացքներ	5,416	4
ILNOVA-ի դասընթացքներ	2,345	7
<b>ԸՆԴԱՄԵՆԸ</b>	<b>120,793</b>	<b>49</b>

## 3. Կարճաժամկէտ գիտաժողովներու եւ ճամբորդական դրամաշնորհներ Հայաստանի ուսանողներուն համար

Կրթանպաստի այս ծրագիրը Հայաստանի մէջ ապրող ուսանողներու, երիտասարդ ակադեմականներու, եւ հետազոտողներու առիթը կընծայէ կարճաժամկէտ դասընթացքներու եւ վրայատրաստումի ծրագիրներու հետեւելու, ինչպէս նաեւ միջազգային գիտաժողովներու եւ աշխատանոցներու ընթացքին իրենց աշխատութիւնները ներկայացնելու:

2023-ին, Բաժանմունքը ստացաւ 186 դիմում եւ 79 նպաստ յատկացուց Հայաստանի քաղաքացիներու որ արտերկրի մէջ գիտաժողովներու մասնակցին: Յատկացուած գումարները

680-էն 1,530 Եւրոյի միջեւ էին, իսկ ընդհանուր գումարը կազմեց՝ 73,605 Եւրո: Հետեւեալ աղիւսակը կը ներկայացնէ 2023-ին յատկացուած «Կարճաժամկէտ գիտաժողովներու եւ ճամփորդական դրամաշնորհներ Հայաստանի ուսանողներուն համար»-ի ընդհանուր պատկերը՝

Կարճաժամկէտ գիտաժողովներու եւ ճամփորդական դրամաշնորհներ Հայաստանի համար	Ցատկացում (Եւրո)	Քանակ
Կարճաժամկէտ գիտաժողովներու եւ ճամփորդական դրամաշնորհներ	73,605	76

#### 4. Բարձրագոյն կրթութեան նպաստ զարգացող երկիրներու հայ ուսանողներուն համար

2023-ին, Բաժանմունքը ստացաւ 407 դիմում եւ 39 կրթանպաստ յատկացուց: Ցատկացուած գումարները 650-էն 4,000-ի Եւրոյի միջեւ էին: Նախորդող տարիներուն յատկացուած 88 կրթաթոշակ նորոգուեցաւ 2023-ին:

Հետեւեալ աղիւսակը կը ներկայացնէ 2023-ին յատկացուած «Բարձրագոյն կրթութեան նպաստ զարգացող երկիրներու հայ ուսանողներուն համար» ծրագիրին ընդհանուր պատկերը՝

Բարձրագոյն կրթութեան նպաստ՝ զարգացող երկիրներու հայ ուսանողներուն համար	Ցատկացում (Եւրո)	Քանակ
Բարձրագոյն կրթութեան նպաստ – նոր կրթանպաստներ	129,900	38
Բարձրագոյն կրթութեան նպաստ – նորոգուած կրթանպաստներ	198,709	88
ԸՆԴԱՄԵՆԸ	328,609	126

#### 5. Փորթուկալի մէջ հայ համալսարանականներու կրթանպաստ

2023-ին, Բաժանմունքը եօթը դիմում ստացաւ. վեց ուսանող նպաստ ստացաւ ներառեալ նախորդ տարիներէն նպաստի նորոգումները:

Հետեւեալ աղիւսակը կը ներկայացնէ 2023-ին յատկացուած «Փորթուկալի մէջ հայ համալսարանականներու կրթանպաստ»-ի ընդհանուր պատկերը՝

Հայ ուսանողներ Փորթուկալի մէջ	Ցատկացում (Եւրո)	Քանակ	Է.	Ա.
Բարձրագոյն կրթութեան նպաստ – նոր կրթանպաստներ	31,000	6	4	2
Բարձրագոյն կրթութեան նպաստ – նորոգուած կրթանպաստներ	13,600	4	1	3
ԸՆԴԱՄԵՆԸ	44,600	10	5	5

## ԵԶՐԱՓԱԿԻՉ ՏՈՒՆԱԼՆԵՐ

2023-ին Բաժանմունքը 756 դիմում ստացաւ. դիմողներուն 61%-ը կին էր իսկ 39%-ը տղամարդ:

Դիմումներ ներկայացուեցան 26 երկիրներէ, անոնց 55%-ը Հայաստանէն էր, 21%-ը Լիբանանէն, իսկ մնացեալ 24%-ը 24 տարբեր երկիրներէ: Դիմողներուն 24%-ը նպաստ ստացաւ:

2023-ին, Բաժանմունքը 288 կրթանպաստ յատկացուց ընդհանուր 976,457 Եւրօ գումարի:

2021-ի կրթանպաստի ծրագիր	Յատկացում (Եւրօ)	Քանակ	Է.	Ա.
1. Հայագիտութեան կրթանպաստներ	408,850	27	16	11
2. Հայագիտութեան համար կարճաժամկետ դրամաշնորհներ	120,793	49	37	12
3. Կարճաժամկետ գիտաժողովներու եւ ճամփորդական դրամաշնորհներ Հայաստանի համար	73,605	76	53	23
4. Բարձրագոյն կրթութեան նպաստ	328,609	126	72	54
5. Հայ ուսանողներ Փորթուկալի մէջ	44,600	10	5	5
<b>ԸՆԴԱՄԵՆԸ</b>	<b>976,457</b>	<b>288</b>	<b>183</b>	<b>105</b>

2023-ին նախորդող տարիներէ ութը նպաստառու իր արարտաճառը ներկայացուց: